

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ԹԱԳՈՒՀԻ ԿԱՅՍՐՈՒՀԻ ՄԱՐԻԱ ՖԵՈԴՈՐՈՎՆԱՅԻՆ.

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ (ԴԱՆԻԱ)

Ստանալով Ձեր պատկառելի ծնող՝ Նորին Մեծուծութեան թագաւոր Խրիստիանի մահուան տխուր լուրը, խորին ցաւակցութիւն եմ յայտնում Ձեզ, ամենաբարեպաշտ թագուհի։ Կ'աղաչեմ Ամենաբարձրեալին ընդունել նորոգ հանգուցեալի հոգին երկնից օթևաններում և Ձեզ ոյժ պարգևել համբերութեամբ կրելու Ձեր ծանր կորուստը։

22 Ն-յունվարի.

ՄԿՐՏԻՉ Ա.. Կաթուղիկոս ամենայն Հայոց.

ԹԻՖԼԻԶ

ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Անկեղծ շնորհակալ եմ Ձերդ Սրբութեան հովուապետական աղօթից և ցաւակցական զգացմանց համար ինձ հասած մեծ վշտի առթիւ, որ արտայայտած էիք Ձեր հեռագրում, որից ես մեծապէս զգացուած եմ։

ՄԱՐԻԱ.